



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

13 մարտի 2015թ.
ք. Երևան

N 85 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՄ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՄ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՐՏԵՐԻ ԿԱՄ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 7-րդ հավելվածով հաստատված արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N1524-Ն որոշման 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել.

1. Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման լիցենզիայի տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2. Ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ցանկը, որոնց ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք իրականացվում է լիցենզիայի առկայությամբ՝ համաձայն հավելված 2-ի:
3. Բարձր հաճախականության սարքերի համար ռադիոհաճախականությունների շերտերի կամ ռադիոհաճախականությունների անվանական նշանակությունների ցանկը, համաձայն հավելված 3-ի:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

13 մարտի 2015թ.
ք. Երևան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ
ԿԱՄ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՍԱՐՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են արտաքին առևտրային նպատակով ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի (այսուհետ՝ Սարքեր), այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման լիցենզիաների տրամադրման գործընթացների հետ կապված հարաբերությունները, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի դեպքում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները՝

1) Բարձր հաճախականության սարքավորումներ՝ սարքավորումներ կամ սարքեր, որոնք նախատեսված են ռադիոհաճախականության էներգիայի առաջացման և օգտագործման համար՝ արդյունաբերական, գիտական, բժշկական, կենցաղային և այլ նպատակներով, բացառությամբ՝ հեռահաղորդակցության ոլորտում կիրառության,

2) Ռադիոէլեկտրոնային միջոցներ՝ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են ռադիոալիքների հաղորդման և (կամ) ընդունման համար, կազմված են մեկ կամ մի քանի հաղորդիչ և (կամ) ընդունիչ սարքերից կամ կազմված են նման սարքավորումների համադրությունից և իրենց մեջ ներառում են օժանդակ սարքավորումներ,

3) Արտաքին առևտուր՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն չհանդիսացող ցանկացած այլ պետության հետ իրականացվող առևտուր,

4) Մեկանգամյա լիցենզիա՝ լիցենզիա, որը տրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին արտաքին տնտեսական գործարքի հիման վրա, որի առարկան է հանդիսանում լիցենզավորման ենթակա ապրանքը և, որը տալիս է իրավունք սահմանված քանակով տվյալ ապրանքի ներմուծման համար,

5) Գլխավոր լիցենզիա՝ լիցենզիա, որը տալիս է արտաքին առևտրային գործունեության մասնակցին իրավունք, լիցենզավորման ենթակա ապրանքի առանձին տեսակի արտահանման և (կամ) ներմուծման համար՝ լիցենզիայով նախատեսված քանակով,

6) Հայտատու՝ արտաքին առևտրային գործունեության մասնակից, որը լիազոր մարմին է ներկայացնում փաստաթղթեր՝ լիցենզիայի կամ թույլտվության ձևակերպման նպատակով:

3. Սույն Կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային գործունեության մասնակիցների վրա:

4. Լիցենզիա կամ լիցենզիայի կրկնօրինակ տրամադրելու (ձևակերպելու) համար Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետև՝ լիազոր մարմին) կողմից գանձվում է պետական տուրք՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և չափով:

5. Լիցենզիաները տրամադրվում են հայտի հիման վրա՝ հայտում նշված բոլոր ապրանքատեսակների համար 3-օրյա ժամկետում, եթե նշված բոլոր ապրանքատեսակների համար լիցենզիա տրամադրող լիազոր մարմինը տվյալ պետական մարմինն է, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արտաքին առևտրային նպատակով ապրանքներ ներմուծելու լիցենզիաներ պահանջվում են:

6. Եթե 5-րդ կետում նշված ժամկետում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, և հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքը, ապա հայտատուն համարվում է լիցենզավորված 5-րդ կետում նշված ժամկետին հաջորդող 2-րդ աշխատանքային օրը և այդ օրվանից իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, իսկ լիցենզավորող մարմինը պարտավոր է 5-րդ կետում նշված ժամկետին հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրել լիցենզիա:

7. Լիցենզիա ստանալու համար հայտը կարող է ներկայացնել հայտատուն՝ անձամբ կամ նրա կողմից լիազորված անձը:

II. Լիցենզիաների տրամադրման կարգը

8. Արտաքին առևտրային նպատակով ապրանքներ ներմուծելու համար կարող է տրվել մեկանգամյա կամ գլխավոր լիցենզիա: Լիազոր մարմինը հաստատում և իր կայքում է տեղադրում լիցենզիայի ձևերը և ձևակերպման կանոնները:

9. Մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարի ժամկետը՝ դրա գործողության մեջ մտնելու ամսաթվից սկսած: Այն ապրանքների դեպքում, որոնց վերաբերյալ սահմանվել են ներմուծման քանակական սահմանափակումներ կամ ներմուծման քվոտա, լիցենզիան գործում է մինչև այն օրացուցային տարին, որի համար սահմանվել է քվոտա:

10. Գլխավոր լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել դրա գործողությունն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ մեկ տարի ժամկետը, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց համար սահմանվել են ներմուծման քանակական սահմանափակումներ կամ սակագնային քվոտաներ, այն ավարտվում է այն օրացուցային տարում, որի համար սահմանվել է քվոտան:

11. Լիցենզիայի ձևակերպման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները սույն հրամանով սահմանված 1-ին ձևաթղթով՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը, որը ներառում է ապրանքի առանձին տեսակը կամ տեսակների ցանկը, որի համար հայցվում է լիցենզիան, ռեգիստրում պետական գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուի դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը (այսուհետ՝ հայտ),

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը, եթե գործունեության այդ տեսակը կապված է տվյալ ապրանքի շրջանառության հետ,

3) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը հայտի հետ միասին ներկայացնում են նաև պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ ծանուցման մեջ նշում են գեներացված անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը (լրացվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում, հայտատուի հայեցողությամբ),

4) տվյալներ ներկրվող Սարքերի մասին՝ անվանումը, տեսակը, մոդելը, արտադրող երկիրը, տեխնիկական բնութագիրը (ռադիոհաճախականությունների շերտը, հաճախականությունների քայլը, հաղորդիչի հզորությունը, ռադիոազդանշանի մոդուլման տեսակն ու ձևը),

5) յուրաքանչյուր Սարքերի համար սահմանված օրինակի համապատասխանության (համապատասխանության հաստատման) հավաստագրի պատճեն՝ հաստատված հավաստագիրը տրամադրող մարմնի կնիքի դրոշմվածքով, եթե նման փաստաթղթի առկայությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

6) Եթե լիցենզիայի տրամադրման համար դիմումը ձևակերպվում է մի քանի տեսակի, ձևի և մոդելի Սարքերի, ինչպես նաև այլ ապրանքներին կցված կամ դրանց մեջ տեղադրված նմանատիպ ապրանքների համար, որոնք համապատասխանում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով (ԵՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգված 10 նիշանոց կոդին, լիցենզիայի տրամադրման համար դիմումին կցվում է սույն հրամանի 2-րդ ձևաթղթով սահմանված տեղեկատվություն:

12. Էլեկտրոնային եղանակով՝ սույն հրամանին համապատասխան լիցենզավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

13. Հայտատուից պահանջվող բոլոր փաստաթղթերը կարող են ներկայացվել պատճենների տեսքով, իսկ դրա իսկությունը կարող է ստուգվել լիցենզիա տրամադրելիս՝ բնօրինակի հետ համեմատելով:

14. Ներկայացված փաստաթղթերի օրինակների յուրաքանչյուր էջը պետք է վավերացված լինի հայտատուի՝ ֆիզիկական անձի դեպքում ստորագրությամբ, իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), կամ փաստաթղթերի օրինակները պետք է կարված լինեն, իսկ դրանց վերջին էջերը վավերացված լինեն հայտատուի ստորագրությամբ և/կամ կնիքով:

15. Լիցենզիան տրամադրվում է կամ լիցենզիայի տրամադրումը մերժվում է լիազոր մարմնի կողմից, փաստաթղթերը ներկայացնելու օրվանից՝ մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ,

2) լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողությունը դադարեցված է կամ կասեցված,

3) քվոտան, ինչպես նաև սակագնային քվոտան սպառված է:

17. Լիցենզիայի մերժման վերաբերյալ որոշումը պետք է լինի հիմնավորված և հղում պարունակի սույն կարգի 16-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկին:

18. Լիազոր մարմինը ձևակերպում է լիցենզիայի բնօրինակը, որը տրամադրվում է հայտատուին: Նախքան ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ հայտատուն լիցենզիայի բնօրինակը ներկայացնում է համապատասխան մաքսային մարմին, որը, լիցենզիան

հսկողության տակ վերցնելով, հայտատուին է տալիս դրա պատճենը՝ այն հսկողության տակ վերցնելու մասին մաքսային մարմնի կողմից կատարված նշումով:

19. Տրամադրված լիցենզիաների մեջ փոփոխություններ չեն կարող կատարվել, այդ թվում՝ տեխնիկական բնույթի:

20. Լիազոր մարմինն իրավունք ունի լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին որոշում ընդունել հետևյալ դեպքերում՝

1) եթե առկա է հայտատուի գրավոր դիմումը լիցենզիան կասեցնելու վերաբերյալ,

2) լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցման կամ կասեցման,

3) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար տրված լիցենզիան դադարեցնելու և կասեցնելու, եթե գործունեության նման տեսակը կապված է այն ապրանքի շրջանառության հետ, որի համար լիցենզավորման պահանջ է սահմանվել,

4) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

21. Լիցենզիայի գործողությունը կասեցվում է դրա մասին լիազոր մարմնի կողմից հիմնավոր որոշման ընդունման օրվանից, որը պետք է հղում պարունակի սույն կարգի 20-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկին:

22. Կասեցված լիցենզիայի գործողությունը լիազոր մարմնի կողմից պետք է վերականգնվի դրա գործողության կասեցման հիմքերը վերանալու հաջորդ աշխատանքային օրը: Լիցենզիայի գործողության կասեցումը հիմք չէ այն կասեցման ժամկետին համապատասխան ժամկետով երկարաձգելու համար:

23. Լիցենզիայի կորստի դեպքում լիազոր մարմինը հայտատուի գրավոր դիմումի հիման վրա և Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով ու չափով պետական տուրքը (օրենքով նման տուրք սահմանված լինելու դեպքում) վճարելուց հետո տրամադրում է բնօրինակի նման ձևակերպվող և «Կրկնօրինակ» նշագրում պարունակող լիցենզիայի կրկնօրինակը: Լիցենզիայի կրկնօրինակը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

24. Լիցենզիայի հսկողությունից հանելու մասին տեղեկատվությունը լիազոր մարմինը կցում է էլեկտրոնային բազայում առկա տվյալ լիցենզիայի գործին, որը հասանելի է հայտատուի համար, իսկ հայտատուի դիմումի դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է նաև թղթային տարբերակով տեղեկանք:

ՑԱՆԿ

ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՄ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ

Ապրանքի անվանումը	ԵՏՄ ԱՏԳ ԱԱ խումբը կամ կողը
1. Արդյունաբերական, գիտական և բժշկական նշանակության	8419
բարձր հաճախականության սարքեր, սարքավորումներ,	8514
բացառությամբ իրենց մեջ ներառող բարձր հաճախակա-	8540
նության գեներատորներ, բացառությամբ`	9018
	9027
1) Կենցաղային գերբարձր հաճախականության վառարանների,	8516 50 000 0
2) Բարձր հաճախականության սարքեր,	8419
ռադիոհաճախականություններ կամ ռադիոհաճախականության	8514
գոտիներ օգտագործող` համաձայն սույն հրամանի հավելված 3-ի	8540
	9018
	9027
2. Տարբեր կիրառության ռադիոէլեկտրոնային միջոցներ ձայնի,	
պատկերի, տվյալների և (կամ) այլ տեսակի տեղեկատվության ընդունման	
և փոխանցման համար` այդ թվում ներկառուցված կամ այլ ապրանքների	
կազմում ընդգրկված, բացառությամբ`	

1) Վերջնակետային (բաժանորդային) հաղորդիչ սարքավորումներ,	8517 12 000 0
իր մեջ ընդունիչ սարք ներառող բջջային կապի ցանցերի համար	8517 62 000 9
(բջջային հեռախոսներ, ինչպես նաև մոդեմներ, որոնք կիրառվում են	8517 69 900 0
բջջային կապի ցանցում) նախատեսված, այդ թվում՝ ներկառուցված	
կամ այլ սարքերի կազմում ընդգրկված	
2) Ռադիոկայաններ, աշխատող 433, 075– 434, 775 ՄՀց	8517 62 000 9
ռադիոհաճախականության տիրույթում 10 մՎտ-ից ոչ ավել	
ելքային հզորությամբ հաղորդչով,	
3) Ռադիոկայաններ, աշխատող 446,0- 446,1 ՄՀց ռադիո-	8517 69 900 0
հաճախականության տիրույթում, 0,5 Վտ-ից ոչ ավել ելքային հզո-	
րությամբ հաղորդչով,	
4) 27 ՄՀց տիրույթով ռադիոկայաններ, աշխատող	8517 62 000 9
26,965 –27, 860 ՄՀց ռադիոհաճախականության տիրույթում,	8517 69 900 0
5 Վտ-ից ոչ ավել ելքային հզորության հաղորդիչով	
5) Հաղորդիչ սարքավորումների, իրենց մեջ ներառող	8471
փոքր շառավղով IEEE 802.15 ստանդարտին համապատասխան	8517
սարքավորումներ (Bluetooth) և աշխատող 2400-2483,5 ՄՀց	8518
ռադիոհաճախականության տիրույթում, 100 ՄՎտ-ից ոչ ավել ելքային	8519
հզորությամբ հաղորդչով, այդ թվում ներկառուցված	8521
կամ այլ սարքերի կազմում ընդգրկված	8521
	8525
	8526
	8527
	8528
	90

6) Վերջնակետային (բաժանորդային) հաղորդիչ սարքավորում,	8471
որը ներառում է IEEE 802.11, IEEE 802.11.b, IEEE 802.11.g, IEEE 802.11.n	8517
ստանդարտի փոքր շառավղով ընդունիչ սարք (Wi-Fi)	8518
2400 - 2483,5 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող	8519
և 100 մՎտ-ից ոչ ավելի հզորությամբ հաղորդչով, այդ թվում ներկառուցված	8521
կամ այլ սարքերի կազմում ընդգրկված	8525
	8526
	8527
	8528
	90

7) Վերջնակետային (բաժանորդային) հաղորդիչ սարքավորում,	8471
որը ներառում է IEEE 802.11.a, IEEE 802.11.n ստանդարտի	8517
փոքր շառավղով ընդունիչ սարք (Wi-Fi) 5150- 5350 ՄՀց	8518
և 5650-5725 ՄՀց ռադիոհաճախականությունների	8519
տիրույթում աշխատող և 100 մՎտ-ից ոչ ավելի ելքային հզորությամբ	8521
հաղորդչով, այդ թվում ներկառուցված կամ այլ սարքերի կազմում	8525
ընդգրկված	8526
	8527
	8528
	90

8) Վերջնակետային (բաժանորդային) հաղորդիչ սարքավորում,	8471
որը ներառում է IEEE 802.16, IEEE 802.16.e ստանդարտի ընդունիչ	8517
սարք (Wi-MAX) 2500- 2690 ՄՀց և 3400-3600 ՄՀց	
ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող և 1 Վտ-ից	
ոչ ավելի ելքային հզորությամբ հաղորդչով, այդ թվում ներկառուցված	

կամ այլ սարքավորումների կազմում ընդգրկված:

(Ռադիոհաճախականությունների 3400-3600 ՄՀց տիրույթում
բացառությունները Ռուսաստանի Դաշնությունում չեն տարածվում)

9) Ռադիոճառագայթող սարքավորումներ չպարունակող ռադիոընդունիչ միջոցներ, նախատեսված հեռուստատեսային և ռադիոհեռարձակման ծրագրերի ընդունման համար՝ ներառյալ արբանյակային հեռարձակումը, լսողական սարքեր և ռադիովարժասարքեր լսողության խնդիրներ ունեցող անձանց համար, անհատական ռադիոկանչի սարքավորումներ, արբանյակային ռադիոտեղորոշման համակարգերի (ԳԼՈՆԱՍՍ,GPS), այդ թվում ներկառուցված կամ ընդգրկված այլ սարքավորումների կազմում:	8517 8526 8527 8471 8528
10) «ԴԵՔՏ» (DECT) տեխնոլոգիայի հեռախոսային անլար սարքավորումների բազային և բաժանորդային բլոկներ, աշխատող 1880-1900 ՄՀց ռադիոհաճախականության տիրույթում, 10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով	8517 12 000 0
11) Բնական աղետներից տուժածներին հայտնաբերելու և փրկելու համար նախատեսված 457 կՀց ռադիոհաճախականության տիրույթում աշխատող սարքավորումներ	8525 8517 8526 8527
12) 13,553– 3,567 ՄՀց հաճախականության տիրույթում աշխատող ռադիոհաճախականության նույնականացման սարքավորումներ	8526

13) Պիտակների շտրիխ կոդի մշակման և այդ պիտակներից	8470
ստացված տեղեկատվության հաղորդման համար նախատեսված	8471
ռադիոէլեկտրոնային միջոցներ ռադիոհաճախականության	8517
433,05 ՄՀց -434,79 (433,92 +-0,2%) ՄՀց տիրույթում աշխատող և	8526
10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով	
14) Գործողության փոքր շառավղով հեռակառավարման վահանակների	
և հեռուստաչափության հաղորդման, հեռուստակառավարման,	
ազդանշանման, տվյալների փոխանցման և այլ նմանատիպ	
փոխանցումներով սարքավորումներ	
ռադիոհաճախականության 433,075 ՄՀց-434,79 ՄՀց տիրույթում	
աշխատող և 10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով	
15) Ավտոմատ ռադիոհաղորդիչների անվտանգության	8525
ռադիոազդանշանային սարքավորումներ, աղետի ազդանշաններ	8526
հաղորդելու համար	8531
ա) ռադիոհաճախականության 26,945 ՄՀց և 26,960 ՄՀց տիրույթում	
աշխատող և 2 Վտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով,	
բ) ռադիոհաճախականության 433,05 ՄՀց – 434,79 (433,92 +- 0,2%) ՄՀց	
տիրույթում աշխատող և 5 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով,	
գ) ռադիոհաճախականության 868-868, 2 ՄՀց տիրույթում աշխատող և	
10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով,	
16) Լսողական խանգարումներ ունեցող անձանց համար նախատեսված	8518
(լսողական սարքավորումներ և ռադիովարժասարքեր) սարքավորումների	9021
և արքեսուարների անլար համակարգեր 230 ՄՀց	
ռադիոհաճախականության տիրույթում աշխատող, 10 մՎտ-ից ոչ ավել	
ելքային հզորությամբ հաղորդիչով և չեն օգտագործում մինչև	
108-144 ՄՀց,148-151 ՄՀց, 162,7-163,2 ՄՀց և 168,5-174 ՄՀց	

հաճախականության տիրույթները

17) Ինքնաթիռների և նավակների մակնիշների ռադիոկառավարման սարքավորումներ 28,0-28,2 ՄՀց և 40,66-40,70 ՄՀց 8526

ռադիոհաճախականության տիրույթում աշխատող և 1 Վտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով,

18) Մանկական ռադիոհաղորդակցման սարքավորումներ և ռադիոկառավարման խաղալիքներ 26957 – 27283 կՀց
ռադիոհաճախականության տիրույթում աշխատող և 10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով

19) Մանկական ռադիոազդանշանային և ռադիոհաղորդակցման 8517

սարքավորումներ, ինչպես նաև երեխային հետևող ռադիոհսկողության սարքեր, աշխատող 38,7-39,23 ՄՀց և 40,66 – 40,70 ՄՀց
ռադիոհաճախականության տիրույթում, 10 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորության հաղորդչով, ինչպես նաև 863,933- 864,045 ՄՀց
ռադիոհաճախականության տիրույթում աշխատող և 2 մՎտ-ից ոչ ավել ելքային հզորությամբ հաղորդչով,

20) 66-74 ՄՀց, 87,5-92 ՄՀց ռադիոհաճախականության տիրույթում 8518 10

աշխատող, ներառյալ մինչև 10 մՎտ ճառագայթման թույլատրելի հզորությամբ հաղորդչով ռադիոբարձրախոսներ, («Կարակետ» տեսակի)

3. Տեխնիկական ռադիոհսկողության ծրագրա-սարքավորումային 8526

համալիրներ, ընդունիչ սարքավորումներ, նախատեսված 8527

էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուր հանդիսացող ռադիոէլեկտրոնային միջոցների հայտնաբերման համար:

ՑԱՆԿ

ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՐՏԵՐԻ ԿԱՍ
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N h/h	Ռադիոհաճախականությունների շերտեր կամ ռադիոհաճախականությունների շերտերի անվանական նշանակություններ թույլատրելի շեղումներով	Հզորությունը
1	1,0 կՀց +/- 20% կամ 0,8 - 1,2 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
2	2,4 կՀց +/- 7,5% կամ 2,2 - 2,6 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
3	4 կՀց +/- 7,5% կամ 3,7 - 4,3 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
4	8 կՀց +/- 7,5% կամ 7,4 - 8,6 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
5	10 կՀց +/- 7,5% կամ 9,2 - 10,8 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
6	11 կՀց +/- 7,5% կամ 10,1 - 11,9 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
7	16 կՀց +/- 7,5% կամ 14,8 - 17,2 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
8	18 կՀց +/- 7,5% կամ 16,7 - 19,4 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
9	20 կՀց +/- 7,5% կամ 18,5 - 21,5 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
10	22 կՀց +/- 7,5% կամ 20,4 - 23,7 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
11	30 կՀց +/- 7,5% կամ 27,7 - 32,3 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
12	40 կՀց +/- 7,5% կամ 37 - 43 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
13	44 կՀց +/- 10% կամ 40 - 48 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
14	60 կՀց +/- 10% կամ 54 - 66 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
15	66 կՀց + 12% - 10% կամ 59 - 74 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
16	180 կՀց +/- 2,5% կամ 175,5 - 184,5 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
17	205 կՀց +/- 2,5% կամ 200 - 210 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
18	215 կՀց +/- 2,5% կամ 210 - 220 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
19	225 կՀց +/- 2,5% կամ 220 - 230 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
20	235 կՀց +/- 2,5% կամ 230 - 240 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
21	245 կՀց +/- 2,5% կամ 239 - 251 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
22	255 կՀց +/- 2,5% կամ 249 - 261 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
23	265 կՀց +/- 2,5% կամ 259 - 271 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
24	275 կՀց +/- 2,5% կամ 269 - 281 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
25	288 կՀց +/- 2,5% կամ 281 - 295 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
26	300 կՀց +/- 2,5% կամ 292,5 - 307,5 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
27	302 կՀց +/- 2,5% կամ 295 - 309 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ
28	316 կՀց +/- 2,5% կամ 309 - 323 կՀց	ոչ ավել, քան 5 Վտ

29	330 կՀց +/- 2,5%	կամ 322 - 338 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
30	338 կՀց +/- 2,5%	կամ 330 - 346 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
31	354 կՀց +/- 2,5%	կամ 346 - 362 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
32	372 կՀց +/- 2,5%	կամ 363 - 381 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
33	390 կՀց +/- 2,5%	կամ 381 - 399 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
34	400 կՀց +/- 2,5%	կամ 390 - 410 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
35	410 կՀց +/- 2,5%	կամ 400 - 420 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
36	430 կՀց +/- 2,5%	կամ 420 - 440 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
37	440 կՀց +/- 2,5%	կամ 429 - 451 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
38	450 կՀց +/- 2,5%	կամ 439 - 461 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
39	472 կՀց +/- 2,5%	կամ 461 - 483 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
40	495 կՀց +/- 2,5%	կամ 484 - 507 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
41	519 կՀց +/- 2,5%	կամ 507 - 531 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
42	600 կՀց +/- 2,5%	կամ 585 - 615 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
43	871 կՀց +/- 2,5%	կամ 850 - 892 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
44	880 կՀց +/- 1,0%	կամ 871 - 889 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
45	914 կՀց +/- 2,5%	կամ 892 - 936 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
46	959 կՀց +/- 2,5%	կամ 936 - 982 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
47	1007 կՀց +/- 2,5%	կամ 982 - 1032 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
48	1058 կՀց +/- 2,5%	կամ 1032 - 1084 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
49	1060 կՀց +/- 2,5%	կամ 1033,5 - 1086,5 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
50	1112 կՀց +/- 2,5%	կամ 1085 - 1139 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
51	1168 կՀց +/- 2,5%	կամ 1139 - 1197 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
52	1760 կՀց +/- 2,5%	կամ 1720 - 1800 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
53	2200 կՀց +/- 2,5%	կամ 2145 - 2255 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
54	2640 կՀց +/- 1,0%	կամ 2610 - 2670 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
55	5280 կՀց +/- 2,5%	կամ 5150 - 5410 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
56	6780 կՀց +/- 0,2%	կամ 6767 - 6794 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
57	13560 կՀց +/- 1,0%	կամ 13424 - 13696 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
58	13560 կՀց +/- 0,05%	կամ 13553,2 - 13566,8 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
59	27120 կՀց +/- 1,0%	կամ 26850 - 27390 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
60	27120 կՀց +/- 0,6%	կամ 26957 - 27283 կՀց	նչ ավել, քան 5 Վտ
61	40,68 ՄՀց +/- 1,0%	կամ 40,3 - 41,1 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
62	40,68 ՄՀց +/- 0,05%	կամ 40,66 - 40,70 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
63	81,36 ՄՀց +/- 1,0%	կամ 80,6 - 82,2 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
64	433,92 ՄՀց +/- 0,2%	կամ 433,05 - 434,79 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
65	915 ՄՀց +/- 1,4%	կամ 902 - 928 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
66	2450 ՄՀց +/- 2,0%	կամ 2400 - 2500 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
67	5800 ՄՀց +/- 1,3%	կամ 5725 - 5875 ՄՀց	նչ ավել, քան 5 Վտ
68	24,125 ԳՀց +/- 0,5%	կամ 24,0 - 24,25 ԳՀց	նչ ավել, քան 5 Վտ
69	42,3 ԳՀց +/- 2,5%	կամ 41,3 - 43,4 ԳՀց	նչ ավել, քան 5 Վտ

70	46,2 ԳՀg +/- 2,5%	կամ 45,0 - 47,4 ԳՀg	նչ ավել, քան 5 Վտ
71	48,4 ԳՀg +/- 2,5%	կամ 47,2 - 49,6 ԳՀg	նչ ավել, քան 5 Վտ
72	61,25 ԳՀg +/- 0,4%	կամ 61,0 - 61,5 ԳՀg	նչ ավել, քան 5 Վտ
73	122,5 ԳՀg +/- 0,4%	կամ 122,0 - 123,0 ԳՀg	նչ ավել, քան 5 Վտ
74	245 ԳՀg +/- 0,4%	կամ 244,0 - 246,0 ԳՀg	նչ ավել, քան 5 Վտ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ապրանքների ներմուծման լիցենզիաների տրամադրման հայտի և լիցենզիայի ձևակերպման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հրահանգը կազմված է «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման» կանոնի 8-րդ կետի (կցված է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի №7 հավելվածին, մայիսի 29, 2014թ.) իրականացման համար և կարգավորում է ապրանքների ներմուծման համար լիցենզիայի հայտի (այսուհետ՝ Լիցենզիա, Հայտում համապատասխանաբար) և նման լիցենզիայի ձևակերպման կարգը:

2. Սույն Հրահանգում օգտագործված հասկացությունները սահմանված են 2014 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» N1524-Ն որոշմամբ:

3. Սյունակներում կողավորված տեղեկության լրացման դեպքում կիրառվում են մաքսային հայտարարագրերի լրացման համար օգտագործվող, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ հաստատված դասակարգիչներ:

4. Տեղեկության կողերը պետք է լինեն սյունակի վերևի աջ անկյունում և առանձնացված լինեն «|» նշանով (ուղղահայաց գիծ):

II. Հայտի լրացման կարգը

5. Հայտերը լրացվում են հայտատույի կողմից թղթային կրիչի վրա և լրացվում են էլեկտրոնային տպիչ սարքավորումների միջոցով՝ ըստ հավելվածում ներկայացված 1 և 2 ձևաթղթերի:

1) Հայտատույի կողմից լրացվում է նաև հայտի էլեկտրոնային կրկնօրինակը սույն հրամանով սահմանված ձև 1 հրահանգով սահմանված ձևաչափով:

6. Հայտի սյունակները լրացվում են հետևյալ կերպ՝

1) Սյունակ 1՝ «Հայտ» սյունակում նշվում է հայտի 13-նիշանոց համարը, որը կազմվում է հետևյալ կերպ՝

ա) 1 և 2 նիշերը՝ երկրի կոդը՝ ըստ աշխարհի երկրների դասակարգչի (Հայաստանի Հանրապետություն՝ AM),

բ) 3 և 4 նիշերը՝ հայտի գրանցման տարեթվի վերջին երկու թիվը,

գ) 5-7 նիշերը՝ լիազոր մարմնի կնիքի համարը (կողը),

դ) 8-13 նիշերը՝ հայտի հերթական համարը, որը լիազոր մարմնի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով գրավոր և (կամ) էլեկտրոնային տեսքով նշվում է հայտերի հատուկ գրանցամատյանում՝ հայտին կցելով գրանցման 6-նիշանոց թիվ՝ ըստ աճման կարգի,

ե) Սյունակը գրանցվում է լիազոր մարմնի համապատասխան պաշտոնյայի կողմից:

2) Սյունակ 2՝ «Վավերականության ժամկետը»,

ա) սյունակում նշվում է լիցենզիայի՝ հայտատուի կողմից հայցվող վավերականության ժամկետը՝ օր/ամիս/տարի ձևաչափով (օրինակ՝ 01.01.2015-ից մինչ 31.12.2015),

բ) Ամսաթիվը, որից սկսվում է լիցենզիայի վավերականության ժամկետը, պետք է լինի հայտատուի կողմից հայտի ստորագրման ամսաթվից ոչ ուշ, քան երեք ամիս հետո:

3) Սյունակ 3՝ «Լիցենզիայի տեսակը».

ա) սյունակի ձախ հատվածում նշվում է լիցենզիայի տեսակը՝ «գլխավոր» (գլխավոր լիցենզիայի ձևակերպման համար), «մեկանգամյա» (մեկանգամյա լիցենզիա ձևակերպելու համար),

բ) Սյունակի աջ հատվածում «|» (ուղղահայաց գիծ) նշանով նշվում է ապրանքի տեղափոխման ուղղությունը (մեծատառերով)՝ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ»:

4) Սյունակ 4՝ «Պայմանագիր».

ա) սյունակում նշվում է արտաքին առևտրի գործարքի պայմանագրի համարն ու ստորագրման ժամկետը՝ օր/ամիս/ամսաթիվ ձևաչափով,

բ) Պայմանագրի համարի բացակայության դեպքում նշվում է՝ «ա/հ»,

գ) Գլխավոր լիցենզիայի տրամադրման համար հայտը լրացնելիս սյունակը չի լրացվում:

5) Սյունակ 5՝ «Հայտատու» սյունակում նշվում են հետևյալ տվյալները՝ իրավաբանական անձանց համար՝ ամբողջական իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ ազգանունը, անունը, հայրանունը և անձնագրային տվյալներ (սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել, բնակության վայրը):

6) Սյունակի վերևի աջ անկյունում «|» նշանով (ուղղահայաց գիծ) նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<V<<):

7) Սյունակ 6՝ «Վաճառող».

ա) Սյունակում նշվում են ապրանքի հանդեպ իրավունքների փոխանցում նախատեսող պայմանագրի պայմանադիր կողմ հանդիսացող օտարերկրյա գործընկերոջ ամբողջական իրավաբանական անձի անվանումը ու հասցեն՝ պայմանագրի լեզվով, ընդ որում՝ որպես վաճառող՝ օտարերկրյա գործընկերը (գործընկեր), ով վերոնշյալ իրավունքները փոխանցում է հայտատուին,

բ) Գլխավոր լիցենզիայի տրամադրման համար հայտի լրացման դեպքում սյունակում նշվում է՝ «Պայմանագրի պայմաններին համապատասխան»:

8) Սյունակ 7՝ «Արտահանվող երկիրը».

ա) Սյունակում նշվում արտահանվող երկրի (ներմուծման դեպքում) կողը և կարճ անվանումը՝ ըստ աշխարհի երկրների դասակարգչի,

բ) Գլխավոր լիցենզիայի ձևակերպման կամ հայտատուի մոտ ուղարկվող երկրի մասին (երկրների մասին) տեղեկության բացակայության դեպքում սյունակը չի լրացվում:

9) Սյունակ 8՝ «Վաճառողի երկիրը».

ա) Սյունակում նշվում է վաճառողի երկրի կողմը և կարճ անվանումը՝ ըստ աշխարհի երկրների դասակարգչի,

բ) Գլխավոր լիցենզիայի ձևակերպման դեպքում սյունակում նշվում է՝ «Պայմանագրերի պայմաններին համապատասխան», ընդ որում՝ երկրի կողմը չի նշվում:

10) Սյունակ 9՝ «Պայմանագրի փոխարժեքը».

ա) սյունակում նշվում է պայմանագրի փոխարժեքի ամբողջական անվանումը և թվային կողմը՝ ըստ արժույթների դասակարգչի

բ) Գլխավոր լիցենզիայի ձևակերպման դեպքում սյունակում նշվում է՝ «Պայմանագրերի պայմաններին համապատասխան», ընդ որում՝ արժույթի կողմը չի նշվում:

11) Սյունակ 10՝ «Արժեքը».

ա) սյունակում նշվում է ապրանքի արժեքը պայմանագրի արժույթով,

բ) Եթե արժեքը ունի կոտորակային միավորներ, նման արժեքը կլորացվում և ամբողջական մեծություն են դարձնում՝ ըստ մաթեմատիկական կլորացման կանոնների,

գ) Գլխավոր լիցենզիայի ձևակերպման դեպքում սյունակը չի լրացվում,

դ) Եթե պայմանագրում կամ դրա հավելվածներում (լրացումներում) բացակայում է տեղեկություն, որը թույլ կտա հայտի մեջ նշել ապրանքի ճշգրիտ արժեքը, ապա արժեքը նշվում է մոտավոր կերպով:

12) Սյունակ 11՝ «Վիճակագրական արժեք».

ա) սյունակում նշվում է ապրանքի արժեքը ԱՄՆ դոլարով՝ պայմանագրին համապատասխան,

բ) Եթե ապրանքի արժեքը գրված է ոչ ԱՄՆ դոլարով, նման արժեքի վերահաշվարկը ԱՄՆ դոլարով կատարվում է արժույթի պարիտետով (պայմանագրում նշված արժույթի արժեքային հարաբերակցությունը ԱՄՆ դոլարի հանդեպ այն փոխարժույթով, որը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթվին),

գ) Եթե արժեքը ունի կոտորակային միավորներ, նման արժեքը կլորացվում և ամբողջական մեծություն է դառնում՝ ըստ մաթեմատիկական կլորացման կանոնների,

դ) Գլխավոր լիցենզիայի տրամադրման համար հայտի լրացման, ինչպես նաև պայմանագրում կամ կից հավելվածներում ապրանքի արժեքի որոշման համար անհրաժեշտ տեղեկության բացակայության դեպքում վիճակագրական արժեքը նշվում է մոտավոր կերպով, ընդ որում՝ սյունակ 16-ում նշվում է՝ «Արժեքն ու վիճակագրական արժեքը նշված են մոտավոր կերպով»:

13) Սյունակ 12՝ «Ծագման երկիրը».

ա) սյունակում նշվում են ապրանքի ծագման երկրի կարճ անվանումը և կողմը՝ ըստ աշխարհի երկրների դասակարգչի,

բ) Եթե պայմանագրով նախատեսված է ծագման մի քանի երկիր, սյունակում նշվում է՝ «Պայմանագրերի պայմաններին համապատասխան», ընդ որում՝ երկրի կողմը չի նշվում: Եթե նշված երկրները Եվրամիության երկրներ են, սյունակում նշվում է՝ «ԵՄ երկրներ», ընդ որում՝ երկրի կողմը չի նշվում,

գ) Գլխավոր լիցենզիայի տրամադրման հայտի լրացման կամ հայտատույի մոտ ապրանքի ծագման երկրի մասին տեղեկության բացակայության դեպքում սյունակում նշվում է՝ «Պայմանագրերի պայմաններին համապատասխան», ընդ որում՝ երկրի կողմը չի նշվում,

դ) Ապրանքի ծագման երկիրը սահմանվում է ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված, ապրանքների ծագման երկրի սահմանման կանոնների:

14) Սյունակ 13՝ «Քանակը».

ա) սյունակում նշվում է ապրանքի քանակը սյունակ 14-ում նշված չափման միավորներով (կշռի միավորների համար՝ զուտ քաշը),

բ) Չուտ քաշը ապրանքի քաշն է առանց փաթեթավորման, որը սահմանվում է ըստ տեխնիկական կանոնակարգի կամ ստանդարտացման նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

15) Սյունակ 14՝ «Չափման միավոր».

ա) սյունակում կարող է նշվել մինչև երկու չափման միավոր՝ ըստ տողերի,

բ) Սյունակի առաջին տողում նշվում է ապրանքի չափման հիմնական միավորի կարճ անվանումը՝ ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության Միասնական ապրանքային անվանացուցակի (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ): Ապրանքի չափման լրացուցիչ միավորի առկայության դեպքում չափման այդ միավորը գրվում է սյունակի երկրորդ տողում՝ ըստ չափման միավորների դասակարգչի, ընդ որում՝ սյունակ 13-ում ըստ տողերի նույնպես նշվում է ապրանքի քանակը:

16) Սյունակ 15՝ «Ապրանքի կողը ըստ ԱՏԳ ՄԱԱ և դրա նկարագրությունը».

ա) սյունակում նշվում է ապրանքի նկարագրությունը և դրա դասակարգման կողը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ-ի: Ապրանքի նկարագրությունը պետք է թույլ տա միանշանակ կերպով այն դասել ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ-ի 10-նիշանոց դասակարգման համապատասխան կողին: Ապրանքի նկարագրությունը պետք է նաև ներառի նրա անվանումը (առևտրային, կոմերցիոն կամ այլ՝ ավանդական),

բ) Եթե ամբողջ տեղեկությունը չի տեղավորվում սյունակ 15-ում, ապա տեղեկության մի մասը նշվում է սյունակ 16-ում,

գ) Հայտին սույն Հրահանգի հավելվածում ներկայացված ձևաթուղթ 2-ին համապատասխան հավելված կցված լինելու դեպքում սյունակում նշվում է ապրանքի նկարագրությունը, որը թույլ կտա ապրանքը միանշանակ կերպով դասել ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ-ի 10-նիշանոց դասակարգման համապատասխան կողին, և արվում է «(տե՛ս հավելվածը __ էջում) գրառումը»:

17) Սյունակ 16՝ «Լրացուցիչ տեղեկություն».

ա) սյունակում անհրաժեշտության դեպքում նշվում է տեղեկություն, որը հստակեցնում է սյունակներ 7, 8, 10-15 և 17-ում ներկայացված տեղեկությունը, ինչպես նաև ներկայացվում է տեղեկություն հայտի լրացվում օրը պայմանագրում կատարվող փոփոխությունների վերաբերյալ:

18) Սյունակ 17՝ «Լիցենզիայի տրամադրման հիմքը» սյունակում նշվում է հետևյալ տեղեկությունը՝

ա) հանձնաժողովի որոշումների, անդամ-պետության կամ միջազգային լիազոր մարմինների նորմատիվ-իրավական ակտերի համարներն ու ամսաթվերը, որոնք հիմք են հանդիսանում լիցենզիայի տրամադրման համար,

բ) հայտատույի և ապրանքի արտադրողի կամ սպառողի միջև պայմանագրերի համարներն ու ամսաթվերը, եթե որպես հայտատու հանդես է գալիս միջնորդը,

գ) այլ անհրաժեշտ տեղեկություն, որը կարող է հիմք հանդիսանալ լիցենզիայի տրամադրման համար:

19) Սյունակ 18՝ «Հայտատույի լիազորված անձը».

ա) հայտի ստորագրման համար հայտատույի կողմի լիազորված անձի սկզբնատառերը, ազգանունը, պաշտոնը, հեռախոսահամարը՝ վերոնշյալ անձի ստորագրությամբ և հայտի ստորագրման ամսաթվով:

III. Լիցենզիայի ձևակերպման կարգը

7. Լիցենզիան ձևակերպվում է լիազոր մարմնի կողմից՝ ըստ սույն Համաձայնագրին կից հավելվածում ներկայացված 3 և 4 ձևաթղթերի, հատուկ կեղծումից պաշտպանված թղթի վրա՝ տեղեկատվական համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ:

8. Լիցենզիայի սյունակները լրացվում են հետևյալ կերպ՝

1) Սյունակ 1՝ «Լիազոր մարմին» սյունակում նշվում է լիազոր մարմնի ամբողջական անունը:

2) Սյունակ 2՝ «Լիցենզիա» սյունակում նշվում է լիցենզիայի 16-նիշանոց համարը, որը կազմվում է հետևյալ կերպ.

ա) 1-3 նիշեր՝ ապրանքի համարը (կատեգորիան), որը ընդգրկված է ապրանքների միասնական ցուցակում և որոնց հանդեպ երրորդ երկրների հետ առևտրային հարաբերություններում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ,

բ) 4 և 5 նիշեր՝ երկրի կոդը՝ ըստ աշխարհի երկրների դասակարգչի (Հայաստանի Հանրապետություն՝ AM),

գ) 6 և 7 նիշեր՝ հայտի գրանցման տարեթվի վերջին երկու նիշերը,

դ) 8-10 նիշեր՝ լիազոր մարմնի կնիքի համարը (կոդը),

ե) 11-16 նիշերը՝ հայտի հերթական համարը, որը լիազոր մարմնի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով գրավոր և (կամ) էլեկտրոնային տեսքով նշվում է հայտերի հատուկ գրանցամատյանում՝ հայտին կցելով գրանցման 6-նիշանոց թիվ՝ ըստ աճման կարգի:

3) Սյունակներ 2- 14, 16, 17՝ լրացվում են ըստ սույն Հրահանգի 2-14, 16, 17 ենթակետերով սահմանված աղյուսակների լրացման կարգին համապատասխան:

4) Սյունակ 15՝ «Ապրանքի կոդը ըստ ԱՏԳ ՄԱԱ և դրա նկարագրությունը».

ա) Սյունակում նշվում է ապրանքի նկարագրությունը և դրա դասակարգման համարը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ-ի, սույն Հրահանգի 6-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված կարգով:

բ) Սույն Հրահանգի ձևաթուղթ 4-ին համապատասխան հավելված լիցենզիային կցված լինելու դեպքում, սյունակում արվում է «(տե՛ս հավելվածը __ էջում) գրառումը»:

5) Սյունակ 18՝ «Լիազորված անձ» սյունակում նշվում է լիազոր մարմնի այն պաշտոնյայի սկզբնատառերը, ազգանունը, պաշտոնը՝ ստորագրությամբ և հայտի ստորագրման ամսաթվով, ում լիազորությունների մեջ մտնում է լիցենզիայի ստորագրումը: Վերոնշյալ անձի ստորագրությունը վավերացվում է կնիքով (առկայության դեպքում):

9. Լիցենզիայի ձևաթղթի ներքևում՝ լրացված սյունակներից գատ, կարող է լինել լիցենզիայի սյունակներում նշված տվյալներ պարունակող շտրիխ կամ այլ տեսակի կոդ:

ՀԱՅՏ

Ապրանքների ներմուծման լիցենզիայի համար

1. Հայտ №	2. Վավերական է ___-ից մինչ ___	
3. Լիցենզիայի տեսակը ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	4. Պայմանագիր № _____, _____թ.	
5. Հայտատու	6. Վաճառող՝	
7. Արտահանվող երկիրը	8. Վաճառողի երկիրը	
9. Պայմանագրի փոխարժեքը	10. Արժեքը	11. Վիճակագրական արժեքը
12. Ծագման երկիրը	13. Քանակը	14. Չափման միավորը
15. Ապրանքի կոդը՝ ըստ ԱՏԳ ՄԱԱ		
16. Լրացուցիչ տեղեկություն		
17. Լիցենզիայի տրամադրման հիմք	18. Հայտատույի լիազորված անձը՝ Ա.Ա.Հ Պաշտոնը՝ Հեռախոս՝ Ստորագրություն Անսաթիվ	

ՀԱՎԵԼՎԱԾ

Ապրանքների ներմուծման լիցենզիայի տրամադրման համար հայտին կից

Հայտի հավելված N° _____ թ.			
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
N° h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
Էջերի քանակը Էջ N°		18. Հայտատույի լիազորված անձը՝ Ա.Ա.Հ Պաշտոնը՝ Հեռախոս՝ Ստորագրություն Ամսաթիվ	

ԼԻՑԵՆԶԻԱ
ապրանքների ներմուծման

Լիազոր մարմին		
1. Լիցենզիա №	2. Վավերական է ___-ից մինչ ___	
3. Լիցենզիայի տեսակը ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	4. Պայմանագիր № _____, _____թ.	
5. Հայտատու	6. Վաճառող՝	
7. Արտահանվող երկիրը	8. Վաճառողի երկիրը	
9. Պայմանագրի փոխարժեքը	10. Արժեքը	11. Վիճակագրական արժեքը
12. Ծագման երկիրը	13. Քանակը	14. Չափման միավորը
15. Ապրանքի կոդը՝ ըստ ԱՏԳ ՄԱԱ		
16. Լրացուցիչ տեղեկություն		
17. Լիցենզիայի տրամադրման հիմք	18. Լիազորված անձը՝ Ա.Ա.Հ Պաշտոնը՝ Ստորագրություն Ամսաթիվ	

ՀԱՎԵԼՎԱԾ

Ապրանքների ներմուծման լիցենզիայի տրամադրման համար լիցենզիային կից

Լիազոր մարմին			
Հայտի հավելված № _____ թ.			
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
№ h/h	Ապրանքի նկարագրությունը	Քանակը	չափման միավորը
		Արժեքը	
Էջերի քանակը Էջ №		18. Հայտատույի լիազորված անձը՝ Ա.Ա.Հ Պաշտոնը՝ Հեռախոս՝ Ստորագրություն Ամսաթիվ	